ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

«19» հունիս, 2026թ.

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Մեծարգո՛ պարոն Սիմոնյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 109-րդ, «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 65-րդ և 67-րդ հոդվածներով, օրենսդրական նախաձեռնության կարգով Ձեզ է ներկայացվում ՀՀ ԱԺ պատգամավորներ Ալեն Սիմոնյանի,Արուսյակ Ջուլհակյանի և Հասմիկ Հակոբյանի կողմից «Հայաստանի Հանրապետության «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում փոփոխություններ կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագիծը:

Գրությանը կից ներկայացվում են՝

1. Նախագիծը (հիմնական զեկուցող՝ Արուսյակ Ջուլհակյան)
2. Նախագծի ընդունման հիմնավորումը,
3. Գործող օրենքի փոփոխվող հոդվածի մասին տեղեկանքը:

Խնդրում ենք օրենքի նախագիծը սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

Հարգանքով՝ Ալեն Սիմոնյան

Արուսյակ Ջուլհակյան

Հասմիկ Հակոբյան

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ազգային ժողովի կանոնակարգ» 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-9-Ն սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) 33-րդ հոդվածի 3-րդ շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Ողջույնի ելույթներից հետո պատգամավորները երդվում են՝ «Հանուն Հայաստանի Հանրապետության հարատևության, անկախության, ինքնիշխանության և հզորացման՝ երդվում եմ բարեխղճորեն կատարել ժողովրդի ներկայացուցչի պարտականություններս, պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը և օրենքները, նպաստել Հայաստանի Հանրապետության պետականության ամրապնդմանը և շահերի պաշտպանությանը, անել ամեն ինչ քաղաքացիական համերաշխության, Հայաստանի Հանրապետության քաղաքացիների անվտանգության ու բարեկեցության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության համար: Փա՛ռք նահատակներին և կեցցե՛ Հայաստանի Հանրապետությունը»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Տեղեկանք
«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 33. Առաջին նստաշրջանի անցկացումը

1. Առաջին նստաշրջանի նիստերը բացում և մինչև Ազգային ժողովի նախագահի ընտրվելը նախագահում է տարիքով ավագ պատգամավորը:

2. Առաջին նստաշրջանի բացման առթիվ ողջույնի ելույթի իրավունք ունեն Հանրապետության նախագահը և Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

~~3. Ողջույնի ելույթներից հետո պատգամավորները երդվում են՝ «Հանուն համազգային նպատակների իրականացման և հայրենիքի հզորացման ու բարգավաճման՝ երդվում եմ բարեխղճորեն կատարել ժողովրդի առջև ունեցած պարտավորություններս, պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը և օրենքները, նպաստել Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության և շահերի պահպանմանը, անել ամեն ինչ քաղաքացիական համերաշխության, ազգային ու համամարդկային արժեքների պահպանման համար:»:~~

«3. Ողջույնի ելույթներից հետո պատգամավորները երդվում են՝«Հանուն Հայաստանի Հանրապետության հարատևության, անկախության, ինքնիշխանության և հզորացման՝ երդվում եմ բարեխղճորեն կատարել ժողովրդի ներկայացուցչի պարտականություններս, պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը և օրենքները, նպաստել Հայաստանի Հանրապետության պետականության ամրապնդմանը և շահերի պաշտպանությանը, անել ամեն ինչ քաղաքացիական համերաշխության, Հայաստանի Հանրապետության քաղաքացիների անվտանգության ու բարեկեցության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության համար: Փա՛ռք նահատակներին և կեցցե՛ Հայաստանի Հանրապետությունը»:

4. Նիստից բացակայող կամ Ազգային ժողովի կազմը հետագայում համալրած պատգամավորը երդվում է Ազգային ժողովի՝ իր մասնակցությամբ առաջին նիստում:

4.1. Երդվելուց հետո պատգամավորներն Ազգային ժողովի նիստում ստորագրում են երդման տեքստի տակ:

5. Պատգամավորների երդումից հետո նիստը նախագահողն Ազգային ժողով ընտրվելու մասին Կենտրոնական ընտրական հանձնաժողովի արձանագրության հիման վրա պաշտոնապես հայտարարում է Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թիվը, քաղաքական կոալիցիա կազմած կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) անվանումները և ներկայացնում պատգամավորներին՝ կարդալով յուրաքանչյուրի անունը,

ազգանունը, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) անվանումը, որից հետո պատգամավորները գրանցվում են:

6. Նիստը նախագահողը հայտարարում է առաջին նստաշրջանի օրակարգը՝

1) հաշվիչ հանձնախմբի ստեղծում.

2) Ազգային ժողովի նախագահի ընտրություն.

3) Ազգային ժողովի նախագահի երեք տեղակալների ընտրություններ.

4) մշտական հանձնաժողովների ստեղծում.

5) մշտական հանձնաժողովների նախագահների ընտրություններ.

5.1) Կառավարության առաջարկությամբ՝ Կառավարության կառուցվածքի փոփոխության վերաբերյալ օրենքի նախագծի քննարկում.

6) Կառավարության ծրագրին հավանություն տալու հարց:

7. Առաջին նստաշրջանի նիստերն անցկացվում են հերթական նիստերի համար՝ Կանոնակարգի 37-րդ հոդվածով սահմանված կարգով: Մինչև մշտական հանձնաժողովների նախագահների ընտրությունների հարցի քննարկումն ավարտվելը տեղի են ունենում ամենօրյա նիստեր:

8. Կառավարության ծրագիրն Ազգային ժողով ներկայացվելուց հետո՝ 24 ժամվա ընթացքում, Ազգային ժողովի նախագահը հայտարարում է հարցի քննարկմանը նվիրված նիստի օրը և ժամը:

9. Ազգային ժողովի նախագահն Ազգային ժողովի առաջին նստաշրջանի նիստում հանդես է գալիս խմբակցությունների և մշտական հանձնաժողովների, ինչպես նաև Խորհրդի կազմավորման վերաբերյալ հայտարարությամբ:

10. Առաջին նստաշրջանն ավարտվում է Ազգային ժողովի նախագահի եզրափակիչ ելույթով և հերթական նստաշրջանի գումարման օրվա մասին հայտարարությամբ:

(33-րդ հոդվածը լրաց. 17.01.18 ՀՕ-50-Ն, 08.12.22 ՀՕ-512-Ն)

Հիմնավորում

Առկա իրավիճակը

«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով գործող կարգավորումը, թեև սահմանում է պատգամավորի հիմնական պարտավորությունները, ամբողջականությամբ չի արտացոլում մարդու իրավունքների պաշտպանության, օրենքի գերակայության և հանրային շահի առաջնայնության սկզբունքների ընդգծման անհրաժեշտությունը: Բացի այդ, գործող տեքստում առկա են ձևակերպումներ, որոնք կարող են ենթարկվել լեզվաոճական հստակեցման և արդիականացման:

Մասնավորապես, պատգամավորի երդման տեքստում բավարար չափով արտահայտված չեն մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության, օրենքի գերակայության, ժողովրդավարության, իրավական պետության, ինչպես նաև հանրային շահի գերակայության սկզբունքները, որոնք Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգի անբաժանելի բաղադրիչներն են և պետք է հանդիսանան պատգամավորի գործունեության հիմնարար ուղենիշները:

Հարկ է նշել, որ պատգամավորի երդումը հանդիսանում է իրավական և քաղաքական նշանակություն ունեցող ակտ, որով ընտրված պատգամավորը հրապարակայնորեն ստանձնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենքներին հավատարմորեն ծառայելու, իր լիազորություններն իրականացնելու և հանրային իշխանության իրականացման գործընթացում սահմանադրական արժեքներով առաջնորդվելու պարտավորություն: Հետևաբար, երդման բովանդակությունը պետք է համարժեքորեն արտացոլի այն արժեքային և իրավական հիմքերը, որոնց վրա կառուցված է Հայաստանի Հանրապետության սահմանադրական համակարգը:

Առաջարկվող կարգավորումը

Օրենսդրական փոփոխության իրականացումը «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում՝ երդման տեքստը պետք է ամբողջությամբ արտացոլի ՀՀ Սահմանադրության արժեքներն ու սկզբունքները: Անհրաժեշտ է ներդաշնակեցնել ձևակերպումները գործող սահմանադրական կարգավորումներին: Փոփոխությունը միտված է իրավական հստակության բարձրացմանը, ժամանակակից ժողովրդավարական արժեքների արտացոլմանը, անհրաժեշտ է ընդգծել մարդու իրավունքների, օրենքի գերակայության, հանրային

շահի առաջնայնության կարևորությունը: Համահունչ դարձնել միջազգային ժողովրդավարական պրակտիկային:

Երդումը խորհրդանշական ակտ է, որը ձևավորում է հանրային վստահություն, ավելի ուժեղ և հստակ ձևակերպումները կարող են բարձրացնել քաղաքական պատասխանատվության ընկալումը:

Ակնկալվող արդյունքը

Նախագծով նախատեսված փոփոխության նպատակն է «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով սահմանված երդման տեքստը պետք է ամբողջությամբ արտացոլի ՀՀ Սահմանադրության արժեքներն ու սկզբունքները:

Նախատեսված փոփոխությամբ ակնկալվում է բարձրացնել իրավական հստակությունը, հանրային շահի առաջնայնության կարևորությունը: